ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

14 մարտի 2024 թվականի N 91 - Ա

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 920.000 (ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:
2. Հաստատել՝

1) Մայրության և գեղեցկության տոնին նվիրված մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N 3-ի.

4) Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված N 4-ի.

5) Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

Ստորագրող
ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
3712800290

2024-03-15 15:39:36 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԴ-ի կողմից

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. մարտի 14
ք. Կապան

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. մարտի 14-ի
N 91-Ա որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված
միջոցառման

1. Հ. Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/

2. Ա. Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական

3. Մ. Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

4. Ն. Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

5. Ս. Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

6. Ա. Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

7. Թ. Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

8. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. մարտի 14 -ի
N 91 - Ա որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման

Միջոցառումը նվիրված է մարզում բնակվող՝ սյունեցու դարավոր ավանդույթները կրող ու փոխանցող կնոջ այն կերպարին, ով համարվում է նվիրումի, բարության ու անսահման սիրո գաղափարների կրողը, պահպանողն ու փոխանցողը:

ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից այցելություն կկատարվի Կապանի բժշկական կենտրոն՝ շնորհավորելու մարտի 8-ին ծնված երեխաների մայրիկներին:

Միջոցառումը նախատեսվում է կազմակերպել Տեղ համայնքում: Կմասնակցեն համայնքում բնակվողներ, կհրավիրվեն Արցախի տարբեր բնակավայրերից բռնի տեղահանված ու Տեղ համայնքում ժամանակավոր կացարան ստացած կանայք:

Միջոցառման անցկացման վայրում /դահլիճի ճեմասրահում/ կներկայացվի համայնքում գործող կարպետագործական խմբակի սաների աշխատանքների ցուցահանդես, Տեղ համայնքում հավաքչական աշխատանքների արդյունքում ստեղծված թանգարանի հավաքածուի ցուցադրություն, կկազմակերպվի կարպետագործության վարպետաց դաս:

Օրվա ընթացքում կկազմակերպվի տոնական համերգ, որի ծրագրում կընդգրկվեն Սիսիանի ժողովրդական գարանների անսամբլը, Գորիսի պարի համույթները, անհատ երգիչ կատարողներ և Տեղ համայնքում բնակվող շնորհալի ստեղծագործողներ /երգ, պար, ասմունք/:

«Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ը կներկայացնի «Կարուսել» թատերական ներկայացումը:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. մարտի 14-ի
N 91 - Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված
միջոցառման

Միջոցառման նպատակը.

Միջոցառման նպատակն է արժևորել գարնան զարթոնքը, կանանց նվիրված մեծարանքի, հարգանքի ու երախտագիտության նվիրումը դարձնել մշակութային միջոցառման գերխնդիրը:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը.

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը, կատարողը՝ ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ մարզի համայնքների մասնակցությանբ:

Միջոցառման մասնակիցները.

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառմանը մասնակցում են Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն ՊՈԱԿ-ի դերասանները, «Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի ժող. նվագարանների խումբը, Գորիսի ժողովրդական ու ժամանակակից պարի համույթները և անհատ կատարողներ:

Միջոցառման ժամկետը և վայրը.

Միջոցառումները անց են կացվելու ս/թ մարտ ամսին՝ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը.

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը, միջոցառումների անցկացման վայրը և ժամանակը: Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ: Միջոցառումների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է պատվիրատուի կողմից կատարող կազմակերպությունը:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. մարտի 14 -ի
N 91 - Ա որոշման

ՆԱԽԱՀԱՇԻՎ
Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազարդրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216	135.0
2	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216	55.0
3	Հանրային սննդի ծառայություններ	4236	164.0
4	Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	4239	200.0
5	Այլ մասնագիտական ծառայություններ	4241	126.0
6	Այլ ծախսեր	4861	56.0
	Ընդամենը		736.0
	ԱԱՀ		184.0
	Ընդամենը		920.0

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ մարտի 14 -ի
N 91 - Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մայրության և գեղեցկության տոնին նվիրված
միջոցառման

h/h	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1.	Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառում	2024թ մարտ	ՀՀ Սյունիքի մարզ Տեղ համայնք
	1.1 Միջոցառման մասնակիցների մեկնում Տեղ համայնք	ժամը 12^{00}-14^{00}	ՀՀ Սյունիքի մարզ Տեղ համայնք
	1.2 Նախապատրաստական և փորձնական աշխատանքներ	ժամը 14^{00}-17^{00}	Տեղ համայնքի մշակույթի տան դահլիճ
	1.3 «Կարուսել» թատերական ներկայացում՝ «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կատարմամբ	ժամը 17^{00}-18^{10}	Տեղ համայնքի մշակույթի տան դահլիճ
	1.4 Ընդմիջում	ժամը 18^{10}-18^{30}	Տեղ համայնք
	1.5 Տոնական համերգ՝ Սիսիանի ժողովրդական գարունների անսամբլի, Գորիսի պարի համույթի, անհատ երգիչ կատարողների և Տեղ համայնքում բնակվող շնորհալի ստեղծագործողների մասնակցությամբ /երգ, պար, ասմունք/	ժամը 18^{30}-19^{30}	Տեղ համայնքի մշակույթի տան դահլիճ
	1.6 Վերադարձ համայնքներ	ժամը 20^{00}	

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան